ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՆՅՈՒԹԵՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմական Հայաստանի մի մասը՝ ներկայիս Նախիջևանի ԻՍՍՀ-ն, հարուստ է եղել պատմական և հնագիտական հուշարձաններով։ Նախիջևանի և նրա չորս գավառների՝ Գողթանի, Երնջակի, Ճահուկի և Շահապունիքի հայկական բոլոր գյուղերն էլ ունեցել են իրենց եկեղեցիները, իսկ կենտրոններ հանդիսացող գյուղերում ու ավաններում եղել են մի քանի եկեղեցիներ ու վանքեր, որոնց կից գործել են դպրատներ, ուսումնական օջախներ։ Այսպես, օրինակ, միայն Նախիջևան քաղաքը ունեցել է մոտավորապես 80 հայկական եկեղեցիներ ու վանքեր[1], Ագուլիս գյուղաքաղաքը՝ 10 ճարտարապետական մեծ արվեստով կառուցված եկեղեցիներ, Հին Ջուղան՝ 7 եկեղեցիներ։ Անհրաժեշտ է ընդգծել, որ պատմա-հնագիտական հուշարձանների թիվը Նախիջևանում գնալով նվազում է։ Մի շարք հուշարձաններ վերջին տասնամյակների ընթացքում ավերվել են։ Նախիջևանի պատմա-հնագիտական հուշարձանները քիչ թե շատ ուսումնասիրվել են նախասովետական շրջանում (Ղ. Ալիշան, Քաջբերունի, Ա. Սեդրակյանց, Ե. Լալյան)։ Սակայն ճանապարհորդական, ազգագրական նյութերը սահմանափակ են, մեծ թիվ կազմող հուշարձաններ դուրս են մնացել ուշադրությունից, ներկայացվածներն էլ չեն ենթարկվել պատմա-քննական, համեմատական ուսումնասիրության։

Այս հոդվածում հրապարակության ներկայացված հուշարձանները, նրանց լուսանկարները (նկ. 1—4), արձանագրությունները տպագրվում են առաջին անգամ։ Հրապարակվող նյութերի նպատակն է օգնել պատմական Հայաստանի հնագիտական ու ճարտարապետական հուշարձանների պատմությամբ հետաքրքրվողներին։

Հոդվածում ներկայացված նյութերը վերաբերում են Շահապունիքի (ներկայիս Նախ. ԻՍՍՀ Շահբուզի շրջան), Ճահուկի (ներկայիս Նախիջևանի շրջանի մի մասը) գավառների և Նախիջևան քաղաքի պատմա-հնագիտական հուշարձաններին։

ՇԱՀԱՊՈՒՆԻՔ

Շահապունիքը՝ ներկայիս Շահբուզի շրջանի Կյանդ Շահբուզ գյուղը, գտնվում է շրջկենտրոնից 4 կմ հեռավորության վրա, Շահբուզչայ գետի ստորին հոսանքում, նրա ձախ ափին։

Շահապունիք գավառի մասին պատմա-հնագիտական աղբյուրներում միայն սակավաթիվ տեղեկություններ կան։ Շահապունիքը անվանվել է Շահապունիս, Շահապոնք, Շահփուր, Շահբուզ։ Շահապունիքը եղել է Նախիջևանի առանձին գավառներից մեկը, հաճախ էլ գավառային մի մաս՝ մտնելով Ճահուկ գավառի կազմի մեջ։ Պատմական Շահապունիք գյուղը փռված է եղել բավականին խոր ձորի երկայնքով, որի արևելյան կողմի վիթխարի քարաժայռերի գլխին գտնվում է Շահապունիք ամրոցը։ Պատմական Շահապունիքը ունեցել է բարեկարգ տներ և Ս. Աստվածածնի Ծննդյան մեծ վանք։ Ս. Աստվածածնի Ծննդյան վանքի կառուցման մասին ստույգ տեղեկություններ չկան։ Մեր կարծիքով այն կառուցվել է XIII դարի երկրորդ կեսին և ավերակների է վերածվել մոտավորապես 1790—1800 թթ.։ Հայտնի է, որ Շահապունիքը ավերվել է մի քանի անգամ, և վերջին ավերումից հետո ադրբեջանցի բնակչությունը մոտավորապես 1840—1860 թթ. այդտեղ սկսել է բնակություն հաստատել հին, ավերված գյուղի հիմքը տեղափոխելով ձորի և Շահապունիք վտակի աջ ափը։

Շահապունիք ամրոցը կառուցվել է VI դարում։ Այդ ամրոցի մասին Ստ. Օրբելյանը գրում է. «...Շահապանից բերդ՝ ի Շահապայ պարսկէ շինեալ, և զձորն իւր անուն Շահապանից ձոր, որ հատուածի պատճառաւ եկեալ էր առ նահապետքն Սիւնիս»[2]։ Շահապունիք

---

1 Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Ա, ԺԳ—ԺԶ (1253—1592), Երևան, 1932, էջ 16։

2 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական. Թիֆլիս, 1910, էջ 14

ամրոցը անառիկ է եղել իր բնական դիրքի շնորհիվ։ Այն գտնվում է բրգանման վեր ձգվող մի լեռնակույտի վրա։ Ամրոցը ունի միայն մի մուտք, որը անցնում է 35—60 սմ լայնություն և ավելի քան 200 մ բարձրություն ունեցող լեռնապատնեշի վրայով։ Ամրոցի մուտքի մոտ մինչև այժմ էլ կա քարով շարված մի պատնեշ (2,5 մ լայնությամբ և 3,5—4 մ բարձրությամբ)։ Շահապունիք ամրոցից գտնվել են խեցեղեն իրեր, զենքեր, պարսկական, թուրքական, հայկական հին դրամներ, որոնցից մի քանիսը այժմ պահվում են Նախիջևանի մարզային թանգարանում։

Շահապունիք ամրոց-կացարանի կենտրոնական մասում փորված-բացված է տնակի նմանվող մի փոս, որը ունի 4,5 մ. լայնություն և 5 մ բարձրություն, դեպի ներքև իջնող քարե սանդուղքներ։ Ըստ ավանդության, այդ փոսը ամրոցի կենվորների համար ծառայել է որպես գետնուղի՝ ջուր, պարենամթերք ստանալու և կապ պահպանելու համար։

ՃԱՀՈՒԿ (ՋԱՀՐԻ)

Պատմական Ճահուկ գավառի գավառակենտրոնը՝ Ճահուկ գյուղաքաղաքը, գտնվում է Երնջակ գավառից (ներկայիս Ջուլֆայի շրջան) հյուսիս-արևմուտք։ Այն սահմանակից է պատմական Վայոց ձորին, Ծղկունքին, Երնջակին և Նախիջևանին։

ցիներից Ս. Շողակաթը այժմ ավերակ վիճակում է գտնվում։ Ս. Շողակաթը կառուցվել է 1325—1330 թթ., այսինքն՝ կաթոլիկների ճահուկում հաստատվելու տարիներին։ Այն ավերվել է 1935—1940 թթ.։

Ճահուկի երկրորդ եկեղեցին՝ Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին։



Նկ. 1. Ճահուկի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին։

Ճահուկը Նախիջևանի շրջանի այժմյան Ջահրի գյուղն է։ Այն գտնվում է Նախիջևան-Գորիս ճանապարհի ձախ կողմում, Նախիջևանչայ գետի աջ ափին, նրանից 4 կմ հեռավորության վրա։

Ճահուկը ունեցել է երկու եկեղեցի՝ Սուրբ Շողակաթը և Սուրբ Հովհաննես Մկրտիչը, որոնց կից գործել են դպրատներ։ Այդ եկեղեցիներ Մկրտիչը (նկ. 1), կանգուն է։ Այն գրմբեթավոր է, ունի խորան, պատերին կան սրբապատկերների, խաչքարերի քանդակներ։ Ունի 20 մ. երկարություն և 16 մ լայնություն։ Այս եկեղեցու կառուցման տարեթվի մասին գրավոր աղբյուրներում ստույգ տեղեկություններ չկան։ Մեր կարծիքով այն կառուցվել է մոտավորապես 1450—1455 թթ.։

Ճահուկը հայտնի է եղել նաև իր անառիկ ամրոցներով։ Մինչև այսօր էլ երևում են Ճահուկ, Սրինդ և Ջլմիրան ամրոցների ավերակները։

ՔՅՈՒԼՈՒՍ

Նահապետիքի պատմական Քյոլսը, Քյոլքը ներկայիս Շահբուղի շրջանի Քյուլուս գյուղն է։ Քյուլուսը գտնվում է Շահապետիք գավառակենտրոնից (ներկայիս Շահբուղի շրջանի Կյանդ Շահբուղ) մոտավորապես 11—12 կմ դեպի հյուսիս։

Պատմական Քյոլքը ունեցել է երկու եկեղեցի՝ Սուրբ Արջակապը և Սուրբ Գրիգորը, որոնցից առաջինը այժմ ավերակ վիճակում է, իսկ Ս. Գրիգորը կանգուն է։

Ս. Արջակապի ավերակներից երևում է, որ այն մեծ եկեղեցի է եղել։ Բայց այդ եկեղեցու կառուցման, ինչպես նաև ավերման մասին գրավոր աղբյուրներում ստույգ տեղեկություններ չկան։ Հավանաբար այն կառուցվել է մոտավորապես 1390—1400 թթ., իսկ ավերակների է վերածվել՝ 1850—1860 թթ.։ Ս. Արջակապի ավերակները գտնվում են գյուղի արևելյան կողմում, Շահապունիք վտակի ձախ ափին։

Քյոլքի երկրորդ եկեղեցին՝ Ս. Գրիգորը, գտնվում է գյուղի կենտրոնական թաղամասում։ Այն կանգուն է, կառուցված է բազալտ քարից, վերանորոգումների ժամանակ օգտագործվել են նաև կարմիր քարեր։ Եկեղեցին ունի խորան, զարդաքանդակներ։ Պատերին կան արձանագրություններ՝ «ԹՎ ՌՃԶ», «ՍՐ ԽԱՉՍ ԹՎ ՌՃԶ», այսինքն՝ 1657 թ.։

ՆՈՐՍ

Նորսը՝ ներկայիս Շահբուղի շրջանի Նորս գյուղը, հայտնի է եղել և՛ որպես հայկական մեծ գյուղ, և՛ որպես կրթական, առևտրական կենտրոն։ Նորսեցի առևտրականները սերտ առևտրական կապերի մեջ են եղել Հընդկաստանի, Չինաստանի, Պարսկաստանի, Հունաստանի, Վենետիկի, Վիեննայի և շատ ուրիշ առևտրական կենտրոնների հետ։

Նորսը ունեցել է մի եկեղեցի, որն այժմ կանգուն է։ Արևմտյան կողմից քանդված և վերացված է եկեղեցուն կից գտնվող դպրատան շենքը։ Եկեղեցին տեղացիների կողմից անվանվում է Երեք Խորանի, կառուցված է սև բազալտից, գմբեթավոր է, ունի երկու դուռ, արձանագրություններ, սրբապատկերների, կենդանիների քանդակներ, ներպատուհաններ։ Եկեղեցու մուտքի գլխաքարին արձանագրված է.

«ԽԱՉ ՍԲ ԱՐԷԽԱՒ ՎԱՐԴԱՆԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ
ԻՔԱՐԻՆ ՈՐԴՈՒՆ ՄԿԻՐՏԻՉ
ՍԻՆ ԷՎԷՏԻՍԻՆ։ ԹՎԻՆ Ռ. ՃԻԳ։
ԱՐԻՆ ԴԻՐՈ»։

Ըստ այս արձանագրության, Նորսի եկեղեցին կառուցվել է 1654 թ.։

Եկեղեցու դռան մոտ կանգնեցված է մի խաչքար, որն ունի 2 մ բարձրություն և 1.20 սմ լայնություն։ Ժամանակի, բնության ազդեցության պատճառով խաչքարի արձանագրությունները անընթեռնելի են։ Ըստ ավանդության այդ խաչքարը քանդակել է Հին Ջուղայի քանդակագործներից մեկը։

ՕԾՈՓ (ԲԱԴԱՄԼՈՒ)

Պատմական Շահապունիք գավառի Օծոփ գյուղը ներկայիս Շահբուղի շրջանի Բաղամլու գյուղն է, որը գտնվում է Նախիջևան—Գորիս տանող ճանապարհի ձախ կողմում, ճանապարհից՝ Շահբուզչայ գետից, 7 կմ հեռավորության վրա։

Օծոփը հին հայկական գյուղ է։ Նրա բնակիչները աշխատասեր, վաճառական մարդիկ են եղել։ Օծոփը մատենագրության մեջ հիշատակվում է նաև Մեծոփ, Նշուտ, Նշաձոր անուններով։ Պատմական Օծոփը տեղավորված է եղել մեծ, հարթ տարածությունից դեպի լեռնափեշերը ձգվող-բարձրացող գոգավորության վրա։ Այժմ էլ տեսանելի են հին գյուղի հետքերը։ Նոր գյուղը հնի գոգավորությունից սկսել և լայնանալով իջել է դեպի հարթավայրը։ Բաղամլուի բնակչությունը մինչև 1940—1945 թթ. հայկական էր, իսկ 1960 թ. այնտեղ հիմնական բնակություն են հաստատել ադրբեջանցիները։ Այժմ գյուղում հայեր չկան։

Պատմական Օծոփը ունեցել է երկու հայկական եկեղեցի, որոնցից մեկը տեղացիների կողմից անվանվել է ժամ, իսկ մյուսը՝ վանք։ Այժմ այդ երկու եկեղեցիներն էլ կանգուն են։ Ժամը գտնվում է գյուղի կենտրոնական թաղամասում, իսկ Սուրբ Աստվածածնի վանքը գտնվում է գյուղից մոտավորապես 400—500 մ հեռու գտնվող մի բլրակի վրա։ Օծոփի ժամը, ըստ մուտքի գլխաքարին գրված արձանագրության, կառուցված է. «ԹՎԱԿԱՆ. [ՀԱ]ՅՈՑ ՌԽ. ԴԱՍ.. ԱԴ ԹԵՄ», այսինքն՝ 1591 թ.։ Ժամի



Նկ. 2. Բաղամլուի (Օձոփի) Ս. Աստվածածին վանքը։

պատերին կան արձանագրություններ, որոնք անընթեռնելի են։ Այն անգմբեթ է, իր կառուցման հատակագծով՝ պարզ և հասարակ։

Օձոփի Ս. Աստվածածնի վանքը ժամանակին վեհաշուք և հայտնի վանքի համբավ է ունեցել։ Այդ վանքի և ընդհանրապես՝ Օձոփի մասին հիշում է պատմիչ Առաքել Դավրիժեցին[3]։ Ըստ արձանագրություններում հիշատակվող տարեթվերի. Օձոփի Ս. Աստվածածնի վանքը կառուցվել է հայոց ՌՃԻ (1671 թ.) թվականին, իսկ ըստ Ա. Դավրիժեցու ավելի վաղ։

Ս. Աստվածածնի վանքը (Նկ. 2) կառուցված է բազալտից (դրսի շարվածքում օգտագործված են կարմիր քարեր), ունի խորան, պատերին կան արձանագրություններ, խաչքարեր, կենդանիների, սրբապատկերների բավական մեծ արվեստով արված քանդակներ։ Ս. Աստվածածնի վանքին կից գործել է դպրատուն։ Վանքին մոտիկ գտնվում է 550—600 գերեզմանաքարերով հայկական գերեզմանատունը։

ՆԱԽԻՋԵՎԱՆ

Պատմական Հայաստանի Նախիջևան քաղաքը ներկայիս Նախիջևանի ԻՍՍՀ մայրաքաղաքն է։ Քաղաքը հարուստ է եղել պատմական հուշարձաններով, որոնցից այժմ երկուսն են կանգուն վիճակում՝ գմբեթազարդ Ս. Գևորգ եկեղեցին և Ս. Երրորդություն եկեղեցին։

Ս. Գևորգը գտնվում է ներկայիս քաղաքի կենտրոնական մասում, արևմտյան դրոսայգու մոտ։ Այն տուֆակերտ է, գմբեթը աղյուսաշար է և բանդակազարդված։ Ս. Գևորգ եկեղեցին (Նկ. 3) կառուցվել է XIX դարի կեսերին, պատերին կան զարդաքանդակներ, արձանագրություններ։ Այժմ Ս. Գևորգում տեղավորված է Նախիջևանի մարզային տպարանը։

Քաղաքի կենտրոնական մասում է գտնվում նաև Ս. Երրորդություն եկեղեցին, որը կառուցված է բազալտից և տուֆից։ Սրա կառուցման տարեթվի մասին գրավոր աղբյուրներում, ինչպես նաև եկեղեցու արձանագրություններում, ստույգ տեղեկություններ չկան, բայց ինչպես ավանդությունն է ասում, եկեղեցին շատ հին է։ Այդ բանը հաստատում են նրա կառուցվածքային ոճն ու արվեստը։

3 Տե՛ս «Պատմութիւն վարդապետի Դաւրիժեցւոյ», Վաղարշապատ, 1896, էջ 427։



Նկ. 3. Նախիջևանի Ս. Գևորգ եկեղեցին։



Նկ. 4. Այլաբաթի Ս. Աստվածածին եկեղեցին։

ԱՅԼԱԲԱԹ

Այլաբաթ գյուղը գտնվում է Նախիջևան քաղաքից մեկ կիլոմետր հեռավորության վրա, Նախիջևանից Երևան տանող ճանապարհի աջ կողմում։

Ներկայումս կանգուն է Այլաբաթի Ս. Աստվածածնի եկեղեցին (նկ. 4), որը շարված է բազալտից (գրսի շարվածքները կարմիր քարերից են), գմբեթավոր է, ունի զանգակատուն,

գարդաքանդակներ, կառուցման տարեթիվը հայտնի չէ։ Ըստ պատերին գտնվող արձանագրությունների, եկեղեցին Այլաբաթի հասարակության կողմից վերանորոգումների է ենթարկվել 1854 և 1887 թթ.։

ՇԽՄԱՀՄՈՒԴ

Ըստ ավանդության այս գյուղը Նախիջևան գավառի կազմի մեջ մտնող Շամեն կամ Շմբրթան գյուղն է։ Այն գտնվում է Նախիջևանից Շահբուզ տանող ճանապարհի աջ կողմում։ Շխմահմուդը Նախիջևան քաղաքից հեռու է հինգ կիլոմետր՝ դեպի ճահուկ գավառը։ Ներկայումս Շխմահմուդ գյուղում կանգուն վիճակում է հայկական մի եկեղեցի, որը իր կառուցվածքային ձևով տարբերվում է Նախիջևանի մյուս հայկական եկեղեցիներից։ Նրա կառուցման մասին ստույգ տեղեկություններ հայտնի չեն, պատերին եղած արձանագրությունները անընթեռնելի են։ Շենքը կանգնած է չորս սյուների վրա, ունի կոնաձև, վեր ձգվող ֆասադ, բարձրությունը մոտավորապես 25—26 մ է, կառուցված է հրակայուն աղյուսից։

ԱՍՏԱՊԱՏ (ԹԱԶԵՔԵՆԴ)

Պատմական Աստապատը ներկայիս Նախիջևանի շրջանի Թազեքենդ գյուղն է։

Աստապատը հայտնի է իր հնագիտական մեծարժեք հուշարձաններով։ Հռչակված են Կարմիր վանքը (Ս. Ստեփաննոս Նախավկայի), Ս. Վարդանի վանքը, Ս. Հովհաննեսի մենաստանը, Աբասապատ ամրոցը և ուրիշ պատմահնագիտական հուշարձաններ։ Սակայն այժմ քիչ թե շատ բարեկարգ վիճակում է գտնվում միայն Կարմիր վանքը։ Կարմիր կամ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը (նկ. 5) գտնվում է գյուղից հեռու, անմիջապես Արաքս գետի ափին, պետական սահմանի շրջանում։ Այն հայ պատմագրության մեջ հիշատակվում է VII դարից։ Կարմիր վանքը շինված է քարից և աղյուսից, զմրեթավոր է, ունի գավիթ, կից ունե-



Նկ. 5. Աստապատի Կարմիր կամ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը։

4 Տե՛ս Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 246։

ցել է դպրատուն (որտեղ սովորել է Մ. Արեղյանը), ձիթհան, ջրաղաց և այլ շինություններ։ Վանքի պատերին կան յուղաներկ պատկերներ, պարսպին, դերեզմանաքարերի վրա արված են արձանագրություններ, ճարտարապետական մեծ արվեստով կերտված բանդակներ։ Գմբեթի 8 պատուհանների միջև և նրանցից ներքև Աստվածածնի և 12 առաքյալների զարդապատկերներն են, սեղանը զարդարված է Տիրամոր պատկերով։ 1840 թ. երկրաշարժից ճեղքվել է եկեղեցու զանգակատան պատը, քանդվել և վերացվել է ձիթհանը, ջրաղացը, խարխլվել է պարիսպը։

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՄՈՒՇՆԵՐ

Երևանի հյուսիսային ծայրամասում, ուր հատվում են Ավանի և Քանաքեռի խճուղիները, 1969 թ. հողային աշխատանքների ժամանակ, 3—4 մ խորության վրա, խճուղային ճանապարհների վարչության աշխատակից Գ. Մ. Հովհաննիսյանի կողմից հայտնաբերվեց հողափոր դամբարան։ Այս դամբարանը հետազոտվել է Բ. Բ. Պիոտրովսկու և Գ. Հ. Միքայելյանի կողմից։

Դամբարանում հայտնաբերվել էին խեցեղեն իրեր, բրոնզե դաշույն, ոչխարի և եղջերուի ոսկորներ[1]։ Մարդու աճյունի բացակայությունը, ըստ երևույթին, բացատրվում է դիակիզումով, որը բնորոշ էր Կիրովականի, Լճաշենի, Թրիալեթիի, Ղրղիի և այլ վայրերի գունազարդ խեցեղեն պարունակող դամբարաններին։ Գտնված խեցեղեն առարկաները իրենց ձևերով բաժանվում են երկու տիպի՝ խոշոր, մոնոխրոմով գունազարդ սափորներ և մեծ, խոր, կարմիր և մոխրագույն բրեղաններ, որոնց մեջ աչքի է զարնում մեկ գունազարդ բրեղանը։ Գտնվել է նաև ձեռքով պատրաստած կոպիտ, փոքր, մուգ մոխրագույն թաս հիշեցնող աղաման (նկ. 9)։

Առաջին խմբի գունազարդ ամանները քիչ երկարուկ երեք սափորներ են, որոնք իրարից տարբերվում են չափերով և նախշերով։ Բոլոր սափորները պատած են վառ կարմիր անգոբով։ Անոթների վզերից ներքև ձգվում են սև ներկով արված խոշոր շեվրոններ՝ լցված ուղիղ և ալիքաձև գծերով, շուրթերը զարդարված են թեք գծիկներով։ Անոթներից մեկի շեվրոնների ստորին ծայրերը զարդարված են շրջանաձև նախշերով և դրանցից իջնող օձերի զարդամոտիվներով։ Վերջիններիս գլուխները ձուլված են նշված շրջանների հետ (նկ. 2)։ Երկրորդ անոթի վրա շրջանաձև նախշերը հանդես են գալիս ոչ թե շեվրոնների ծայրերին, այլ ելուստների միջև (նկ. 3)։ Երրորդ անոթի վրա շրջանաձև նախշի փոխարեն արված են արևապաշտության նշաններ՝ սվաստիկաներ (նկ. 1)։ Արև խորհրդանշող այսպիսի նշաններ Հայաստանում հայտնի են էնեոլիթյան ժամանակաշրջանից, սակայն նրանք լայն տարածում են ստանում մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ կեսից և I հազարամյակում հանդիպում են Լճաշենի, Արթիկի, Սևանի, Կիրովականի, Ռեդկին-Լագերի և այլ հուշարձաններում[2]։

Առաջին անգամ չէ, որ Երևանում և նրա շրջակայքում գունազարդ անոթներ են հայտնաբերվում. հայտնի են Մուխանաթ-Թափայի, Միծեռնակաբերդի, Կիրզայի, Թազաքենդի միագույն խեցեղենի նմուշներ, որոնք զարդարված են պարույրներով, ալիքաձև ցանցերով, ղույզ սակրերով, անկյուններով, խաչերով, գծիկներով լցված ուղղանկյուններով և այլ նախշերով[3]։ Նշված նյութերը թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով, երբ լեռնային անասնապահությունը ապրում էր իր ծաղկման ժամանակաշրջանը։ Ցեղային ավագանու ձեռքին կուտակվում էր մեծ քանակությամբ հարստություն, որի մի մասը թաղման ժամանակ դրվում էր նրանց դամբարաններում։

Ցեղային ավագանու դամբարաններ բացվել են Կիրովականում, Թրիալեթիում, Լճաշենում և դրանց մեջ գտնվել են ոսկե և արծաթե զարդարուն թասեր, գավաթներ և զենքեր, գունազարդ խեցեղեն, որոնք բացահայտում են շափազանց բարձր տեղական մշակույթի առկայությունը և նրանց ունեցած կապերը Հին Արևելքի և հատկապես Խեթական թագավորության մշակույթի հետ։

---

[1] Որոշել է Ս. Մեջլումյանը։

[2] С. А. Есаян. Амулеты, связанные с культом Солнца из Армении, СА, 1968, № 2, էջ 255 և հտ.։

[3] К. Х. Кушнарева, Тазакендский могильник, СА, 1960, № 1, էջ 139; Э. В. Хазадян, Лчашенский курган № 6. КСИА, в. 91, 1961, էջ 68; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 47; С. А. Есаян, Ереван. Ереван, 1969, էջ 27, 41, Ս. Ա. Ամիրյան, Հնագիտական նոր հայտնաբերում Երևանի տերիտորիայում, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 268—275։